ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

№ - 020/ 1012
18 մարտի 2026թ.

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
Կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ
Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար փ. 2/1
Էլեկտրոնային հասցե՝ proshingnumner@mail.ru
ՀՎՀՀ՝ 02261135

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին

Հարգելի պարոն Մուրադյան.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ Ապարանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ –ի (այսուհետ՝ Վաճառող) միջև փողոցային լուսավորության համար ջահերի ձեռքբերման նպատակով 31.10.2025թ. կնքվել է N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով պայմանագիրը՝ 37 500 000 (երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ արժեքով:

Կնքված պայմանագրի 8.15 կետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ֆինանսական միջոցները հատկացվել են և 03.12.2025թվականին կնքվել է Համաձայնագիր 1-ը , որով պայմանագիրը մտել է ուժի մեջ և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 60 /վաթսուն/-րդ օրացուցային օրը:

Միաժամանակ պայմանագրի Հավելված N1 տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը և տեղադրումը իրականացվում է Վաճառողի կողմից սեփական միջոցների հաշվին:

Պայմանագրով նախատեսված ապրանքները մինչ օրս՝ 16.03.2026թվականը, չեն մատակարարվել:

20.01.2026 թվականին «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ն դիմել է Գնորդին համաձայն N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով պայմանագրի 8.5 և 8.8 կետերի պայմանագրի ժամկետը 30 օրացույցային օրով երկարաձգելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Իրանի Իսլամական Հանրապետությունում ստեղծված քաղաքական և տնտեսական անկայուն վիճակի, գործադուլների և անհնազանդության ակցիաների հանգամանքը, որտեղից պետք է մատակարարվեին պայմանագրով նախատեսված ապրանքների առանձին դետալները:

Գնորդի կողմից պայմանագրի կատարման ժամկետը չի երկարաձգվել, քանզի «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից մինչև 20.01.2026թվականը՝ պայմանագիրը սահմանված ժամկետում կատարելու համար որևէ միջոցներ չեն նախաձեռնվել. մասնավորապես չեն իրականացվել տեղադրման համար նախապատրաստական աշխատանքները:

Այդուհանդերձ Գնորդի կողմից մինչև 16.03.2026թվականը՝ բացի ապրանքի մատակարարումն իրականացնելու և նախապատրաստական աշխատանքները սկսելու զգուշացումներից, որևէ քայլ չի ձեռնարկվել խոչընդոտելու Վաճառողի կողմից պայմանագրի կատարումը թեկուզ ժամկետի ուշացումով իրականացնելու համար:Այսինքն՝ պայմանագրի ժամկետը 30 օրացույցային օրով երկարաձգելու դեպքում էլ Վաճառողը չէր կարող սահմանված ժամկետում իրականացնել պայմանագրով ստանձնած պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով նաև այն, որ իր կողմից վերոնշված գրությամբ ստեղծված իրավիճակում հայտնի չէ, թե Վաճառողը երբ կկարողանա մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները, գնման պատասխանատու ստորաբաժանումը 16.03 2026թվականին առաջարկել է համայնքի ղեկավարին հիմք ընդունելով N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի Բ) ենթակետի պահանջները միակողմանիորեն լուծել Ապարանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ –ի (այսուհետ՝ Վաճառող) միջև փողոցային լուսավորության համար ջահերի ձեռքբերման նպատակով 31.10.2025թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով պայմանագիրը և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա) պարբերությամբ՝ Վաճառողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսել:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման 16.03.2026թվականի զեկուցագիրը համայնքի ղեկավարը՝ 18.03.2026թվականի N161-Ա որոշմամբ միակողմանիորեն լուծել է Ապարանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ –ի (այսուհետ՝ Վաճառող) միջև փողոցային լուսավորության համար ջահերի ձեռքբերման նպատակով 31.10.2025թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից համաձայն ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15 կետի Գնորդն առաջարկում է Վաճառողին Գնորդի կողմից www.procurement.am պաշտոնական տեղեկագրում պայմանագիրը միակողմանիորեն լուծելու ծանուցումը հրապարկվելու օրվանից հաշված տասներորդ օրը համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի վերջին պարբերության և նույն կետի 27-րդ ենթակետի պահանջների վճարել Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված ապահովումների (որակավորման ապահովում՝ 5 625 000/հինգ միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար / ՀՀ դրամ, պայմանագրի ապահովում՝ 3 750 000/ երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար /ՀՀ դրամ) գումարները, ինչպես նաև N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով պայմանագրի 6.5 կետով նախատեսված 543 750/ հինգ հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր հիսուն/ՀՀ դրամ (29 աշխատանքային օրվա համար՝ 37 500 000x0.05%x29) տույժը Ապարանի համայնքապետարանի 900455101353 հաշվեհամարին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառվելու համար:

Կից ներկայացնում ենք 31.10.2025թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով պայմանագիրը, 03.12.2025թվականին կնքված Համաձայնագիր N1-ը, «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի 20.01.2026 թվականի գրությունը, գնման ընթացակարգի հրավերը, բանկային երաշխիքի ձևով ներկայացված ապահովումների պատճենները, պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը, համայնքի ղեկավարի որոշումը:

Առդիր 1 զիպ ֆայլ:

Վերո նշված փաստաթղթերի պատճենները պայմանագրի միակողմանի լուծման հաջորդող աշխատանքային օրը ուղղարկվում են Վաճառող նաև թղթային տարբերակով՝ փոստային առաքմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Ապարանի համայնքապետարանի
գնումների գլխավոր մասնագետ
Հայկ Հովսեփյան Հեռ.՝ +374 94-23-18-93